Հավելված 14

Աղյուսակ 14. 53

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԼԱՆԸ

ՄԱՍ Ա: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.Գերատեսչության հիմնական վերջնական արդյունքները (որոնց վրա գերատեսչությունը ձգտում է ներազդել և նրանց իրագործման ռազմավարությունները)

Սոցիալական ապահովության ոլորտի հիմնական խնդիրներն ուղղակիորեն առնչվում և համընկնում են Կայուն զարգացման ծրագրի և ՀՀ կառավարության ծրագրի գերակայություններին:

Կենսաթոշակային ապահովության համակարգի նպատակը ՀՀ քաղաքացու սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի իրականացումն է: Ըստ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»:

Կենսաթոշակային ապահովագրություն և ապահովություն

- Կենսաթոշակային գործող համակարգի հետագա կատարելագործում՝ այն ներդաշնակեցնելով սոցիալական պաշտպանության մյուս ծրագրերի հետ:
- Կենսաթոշակառուների կենսամակարդակի բարձրացում:
- Կենսաթոշակների մակարդակի ամենամյա բարձրացում՝ 2012 թվականին աղքատության ընդհանուր գիծը 1.5 անգամ գերազանցող միջին կենսաթոշակի ապահովմամբ:

2.2009թ. գերատեսչության կողմից մատուցվելիք ծառայություններում կատարվող խոշոր փոփոխությունները

Կենսաթոշակների չափերի շարունակական աճ՝

- 2009թ. կենսաթոշակի միջին չափն ավելացնել 16.9%-ով, նույն թվում հիմնական կենսաթոշակի չափը սահմանել 8000 դրամ (6800 դրամի փոխարեն), իսկ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 450 դրամ (395 դրամի փոխարեն):

- Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքի անդամների, շարքային զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների միջին չափն ավելացնել 10.3 %-ով, նույն թվում բազային կենսաթոշակի չափը սահմանել 5800 դրամ (5000 դրամի փոխարեն):
- Սոցիալական կենսաթոշակները բարձրացնել 16.6 %-ով:

2009 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից մատուցվելիք ծառայություններում կատարվող խոշոր փոփոխությունները, ներառյալ այն ծառայությունները որոնք աջակցում են հիմնական գերակա վերջնական արդյունքի նվաճմանը հետևյալն են, մասնավորապես՝

Կենսաթոշակային ապահովության ոլորտ

- 2009թ. Կենսաթոշակների բարձրացումը կնպաստի կենսաթոշակառուների կենսամակարդակի բարձրացմանը: